գլխաւորիչ է նշանակուած Գ. Ա. Կոկովցև։ Զինուորական մինիստրը գեներալ-ադիւտանտ Կուրոպատկին նշանակուած է մանջուրական զօրաբանակի հրամանատար, և զինուորական մինիստրութեան կառավարութիւնը յանձնուած է գեն.-ադ. Սախարովին։

—Հեռաւոր Արևելքի փոխարքայի՝ գեներալ-ադիւտանտ Ալեքսէևի անունով հրատարակուած է Նորին Կայսերական Մեծութեան հետևեալ Բարձրագոյն հրովարտակը փետր. 7-ից. «Ինկատի ունենալով առաջիկայ պատերազմի կարևորութիւնը, որ պէտք է վերջնականապէս ապահովէ Ռուսաստանի դերակշիռ դիրքը Խաղաղ ովկիանոսի ափերի վրայ, և նախատեսնելով, որ ձեզ, իբրև Իմ փոխարքային, անհրաժեշտ կը լինի փոխադրել ձեր ընակավայրը աւելի կենտրոնական տեղ, օրինակ, Խարբին, կամ մի այլ տեղ, ձեր ընտրութեամբ, ես օգտակար համարեցի նշանակել ձեզ օդնական գեներալ ադիւտանտ Կուրոպատկինին, որ լինի պետ ցամաքային զօրքերի, զօրքի հրամանատարի իրաւունքներով և փոխ-ծովապետ Մակարովին, իբրև պետ ծովային ոյժերի, նաւատորմի հրամանատարի իրաւունքներով։ Հաւատացած եմ, որ անկախ և պատասխանատու գլխաւոր պետերի նշանակումն կ'ապահովեցէ ձեզ, իբրև Իմ փոխարքային, ձեզ բաժին ընկած ծանր պատմական պաշտօնի կատարումն։ «Նիկոլայ»։ (Пріамур. Вѣд.)

—Լրագրները հաշուում են, որ մինչև մարտի մէկը պատերազմի առիթով Ռուսաստանում ժողոված գումարի թիւն անցնում է 100 միլիոնից. Իվանովո-Վոզնեսենսկ նուիրել է 15 միլիոնից աւելի, Պետերբուրգ 6 միլիոնից աւելի, Մոսկուա 5 միլիոնից աւելի, Հելսինգֆորս 1 միլիոն մարկից աւելի, Կազան 448,000 ր. Սարատով 397,620 ր., Կիեւ 354,022 ր., Պերմ 311,000 ր., Օդեսսա 275,000, Նիժնիյ-Նովգորոդ 225,000, Խարկովի զեմստվոն 200,000, Վարշավա 170,000, Բաքու քաղաքը նաւթարդիւնագործների համաժողովի հետ միասին 166,000 ր., Ուրալսկ 156,560 ր., և այլն։

—

Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ

—Մամուլի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ Ֆինլանդիայի Կոտկա քաղաքում լոյս տեսնող Kotkanyheter լրագիրը դադարեցրուած է 2 շաբաթով և Հելսինգֆորսում հրատարակուող Paivälehti լրագիրը մի ամսով։

—Յունուարի վերջին վախճանուած Ն. Կ. Միխայլովսկին ցայտնի բելլետրիստ Վ. Գ. Կորոլենկոի հետ միասին Русское

Богатство ամսագրի հրատարակիչ էր։ Նրա մահուամբ Կորոլենկոն մամուլի գլխաւոր իշխանութեան կողմից հաստատուած է իբրև ամսագրի պատասխանատու խմբագիր-հրատարակիչ։

—Թիֆլիսում հրատարակուող Кавказскій Листокъ-ին թոյլ է տրուած զետեղել գեղարուեստական պատկերներ (ոչ-ծաղրանկարներ) և տպագրել պատմուածքներ, թարգմանութիւններ և գրական արտադրութիւններ։